# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.09.2019թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2019/143**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2019թ. թիվ 26/26-1/14158-2019 գրությամբ «Մեդիտեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.08.2019թ. թիվ ՊՆ/02/1579-2019 գրության հիման վրա, 26.08.2019թ. թիվ 26/26-1/14158-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մեդիտեք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Մեդիտեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Մեդիտեք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/143 ընթացակարգի շրջանակներում 30.08.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.08.2019թ. թիվ ՊՆ/02/1579-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով «Մեդիտեք» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «Մեդիտեք» ՍՊԸ-ն armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցումների միջոցով ծանուցվել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Վերջինիս սահմանված կարգով ծանուցվել է անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

«Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը, որոնք հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պայմաններին չհամապատասխանող:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ

կետի 2-րդ ենթակետը, որոշել է 5-րդ չափաբաժնի մասով «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/143 ընթացակարգի շրջանակներում 30.08.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2019/143 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2019/143 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեդիտեք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի 13.08.2019թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.08.2019թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.08.2019թ. թիվ 26/26-1/14158-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.08.2019թ. թիվ ՊՆ/02/1579-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման

արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի

պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մեդիտեք» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն

ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.08.2019թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիրը (երը) և դրա (նց) հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (երի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

05.08.2019թ. գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել Ընկերությանը սահմանված ժամկետում շտկելու վերը նշված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:

09.08.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի թիվ 6.1 հավելվածով նշվել է, որ ապրանքն երաշխավորված է հոսպիտալներում առկա Storz բժշկական սարքավորումներ արտադրող ընկերության կողմից, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ հրավերով սահմանված է, որ ապրանքը պետք է երաշխավորված լինի հոսպիտալներում առկա Storz, Olympus, Fujinon և Pentax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ին 05.08.2019թ. ուղարկված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցման մեջ անդրադարձ չի կատարվել Ընկերության կողմից ներկայացված հավելված 6.1-ով նախատեսված

ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանություններին, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.08.2019թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը հավելված 6.1-ի շտկված տարբերակի փոխարեն 12.08.2019թ. գնահատող հանձնաժողովին հասցեագրված գրությամբ հայտնել է, որ հայտի հավելված 6.1-ով ներկայացված Անիոզիմ Սիներջի 5 ապրանքն երաշխավորված է հոսպիտալներում ցանկացած բժշկական էնդոսկոպիկ սարքերի՝ այդ թվում նաև Olympus, Fujinon և Petnax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից էնդոսկոպիկ սարքերում օգտագործելու համար:

Արձանագրությամբ արձանագրվել է, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ փաստաթուղթը ներկայացվել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, ինչը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներին, քանի որ փաստաթուղթը պետք է հաստատված լիներ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար Ընկերությունը ներկայացրել է 04.02.2019թ. կնքված ախտահանիչ նյութերի մատակարարման պայմանագիր, որին կից հանձնման-ընդունման արձանագրության մեջ պայմանագրի փաստացի կատարման ժամկետ նշված է 05.08.2019թ., ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 09.07.2019թ., ներկայացված պայմանագիրը դեռևս պատշաճ ձևով իրականացված չէր:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված

պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող մասնագիտական փորձառություն:

Նույն կետի 2.5 ենթակետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահատությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ախտահանիչ և/կամ քիմիական նյութերի մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր

կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

«Մեդիտեք» ՍՊԸ-ն հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Մեդիտեք» ՍՊԸ-ն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ 19.07.2019թ. ծանուցվելուց հետո 3 աշխատանքային օրյա ժամկետում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար չի ներկայացրել նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընկերությունը սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որից հետո Ընկերությունը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար

ներկայացրել է «Արմենֆարմ» ՍՊԸ-ի և «Մեդիտեք» ՍՊԸ-ի միջև 04.02.2019թ. կնքված ախտահանիչ նյութերի մատակարարման N 04/02/19 պայմանագիրը՝ կից փաստաթղթերով, որոնց համաձայն պայմանագիրը պատշաճ կատարվել է 05.08.2019թ.:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացրել է 09.07.2019թ. և հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված չափանիշների պահանջներին, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերության հայտը՝ այդ թվում նաև թիվ 3 հավելվածով նախատեսված հայտարարությունը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը չի ունեցել մասնագիտական փորձառություն, քանի որ վերոհիշյալ պայմանագիրը դեռևս ավարտված (կատարված) չի եղել:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով գտնում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը բավարարելու մասով ներկայացված հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2019թ. թիվ 26/26-1/14158-2019 գրությամբ «Մեդիտեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մեդիտեք» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**